ԳԵՎՈՐԳ ԲԵԳԼԱՐԻ ՋԱՀՈՒԿՅԱՆ

Ա.Յու.Մարգսյան

Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Կյանքից հեռացավ աշխարհահռչակ լեզվաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գևորգ Բեգլարի Ջահուկյանը:

Գիտնականներին պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինները, բնության կողմից օժտված լինելով շնորհքով և աշխատասիրությամբ ու ընտրելով գիտության որևէ բնագավառ, ժամանակի ընթացքում կարողանում են հաղթահարել մի շարք դժվարություններ և հասնել որոշակի բարձրության: Այդպիսի գիտնականները նույնպիսի հաջողության կարող էին հասնել նաև գիտության այլ բնագավառներում նախապես ընտրելու դեպքում: Այլ կերպ պետք է գնահատել երկրորդ խմբի գիտնականներին, որոնց նախախնամությունը տվել է հզոր տաղանդ, և որոնք կարծես ստեղծվել են հենց տվյալ բնագավառի համար, ստեղծվել են, որպեսզի լինեն այդ բնագավառի առաջատարները: Այդպիսիները եզակի են և, դեռևս երիտասարդ տարիքում հռչակվելով գիտական աշխարհում, մեծ պատիվ են բերում նաև այն ժողովրդին, որից սերել են: Թերևս նրանց կարելի է համեմատել ճանապարհաշինարարության մեջ գործող այն հզոր սարկտրներին, որոնք, ճեղքելով հսկա ժայռերն ու բլուրները, աշխատելու հնարավորություն են ստեղծում իրենց կրտսեր «գործընկերների» համար: Այդպիսի գիտնականներից է Գևորգ Բեգլարի Ջահուկյանը:

Գ. Բ. Ջահուկյանը ծնվել է 1920թ. ապրիլի 1-ին ՀՀ Կալինինդի (Տաշիր) շրջանի Շահնազար (Մեծավան) գյուղում: 1937թ. ավարտել է Երևանի Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը, 1941թ. ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: 1942-1943թթ. ծառայել է բանակում, որից հետո մեկ տարի որպես ուսուցիչ աշխատել Հրազդանի (Աստղայի) շրջանում: 1947թ. Գ. Ջահուկյանը Հր. Աճառյանի ղեկավարությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» թեմայով, իսկ 1955թ. դոկտորական ատենախոսություն «Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը XVIII-XIXդդ» թեմայով: 1949թ. ստանում է դոցենտի, 1958թ. պրոֆեսորի, 1965թ. գիտության վաստակավոր գործչի կոչում: 1968թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1974թ. ակադեմիկոս, նույն թվականին Եվրոպայի լեզվաբանական ընկերության անդամ, տարբեր տարիների արժանացել բազմաթիվ շքանշանների, պատվոգրերի, պարգևների:

Մեծ լեզվաբանի գիտամանկավարժական գործունեությունը սկսվում է ԵՊՀ-ում դեռևս 1945 թվականից: Շուրջ 60 տարիների ընթացքում նա մշակել և դասավանդել է բազմաթիվ առարկաներ՝ ժամանակակից հայոց լեզու, գրաբար, ընդհանուր լեզվաբանություն, համեմատական քերականություն, լեզվաբանության պատմություն, բարբառագիտություն, լատիներեն, գերմաներեն, հին հունարեն և այլն: 1948-1956թթ. Գ. Ջահուկյանը ղեկավարել է ԵՊՀ օտար լեզուների, 1957-1970թթ. ռոմանագերմանական բանասիրության ամբիոնը: Մեծ լեզվաբանի անունը սերտորեն կապված է ՀՀ ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտի հետ, որտեղ 1949-1950, 1959-1962թթ. աշխատել է որպես ավագ գիտաշխատող, իսկ 1962 թվականից մինչև կյանքի վերջը ինստիտուտի տնօրեն: Նրա գիտական մեծ հեղինակության, կազմակերպչական ձիրքի, փորձի և սկզբունքային վարքագծի շնորհիվ ինստիտուտում մեծ զարգացում ունեցան լեզվաբանության տարբեր բնագավառներ: Գ. Ջահուկյանի ղեկավարությամբ ուսումնառության լույս ուղի են անցել բազմաթիվ երիտասարդ մասնագետներ, որոնցից շատերն այսօր լեզվաբանության բնագավառում լույս ներդրում ունեն:

Մեծ է նաև նրա հասարակական գործունեությունը: Երկար տարիներ նա անփոխարինելի ղեկավարել է լեզվաբանության՝ գիտական աստիճաններ շնորհող խորհուրդը, լեզվի պետական տեսչությանը կից հայերենի բարձրագույն խորհուրդը, ակտիվորեն մասնակցել բազմաթիվ գիտաժողովների, հանդիպումների, քննարկումների:

Առավել արգասավոր է գիտնական Ջահուկյանի գրիչը, բազմազան նրա գիտական հետաքրքրությունները և հետազոտությունների շրջանակները: Գուցե չկա հայերենագիտության որևէ բնագավառ, որտեղ նա չունենա իր մեծ ավանդը: Անհնար է պատկերացնել հայերենի համեմատական քերականությունը առանց Գ. Ջահուկյանի գործունեության: 1959թ. հրատարակված «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» մենագրության մեջ ներկայացվում է գրաբարի հոլովական համակարգի համեմատական քննությունը, առանձնացվում հայերենի հոլովման բոլոր տիպերը, բացահայտվում հոլովման համակարգում բառի ուղիղ ձևի վրա նրա որևէ հոլովման պատկանելու օրինաչափությունները: 1967թ. հրատարակված «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» աշխատության մեջ ուսումնասիրության նյութ են դառնում հնդեվրոպական բառաշերտի հիմնական և երկրորդական ճյուղավորությունները, պայմանավորվում հայերենի բաղաձայնական համակարգի սկզբունքները, քննվում հայերենի հնդեվրոպական հնչյունությունները, իսկ 1969թ. հրատարակված «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» մենագրության մեջ հեղինակը քննության է ենթարկում հայերենի փոխառնությունները Առաջավոր Ասիայի լեզուների հետ, հստակ տարբերակում այդ լեզուների

միջև եղած ծագումնաբանական ընդհանրությունները փոխառություններից, ուսումնասիրում հայերենին անհայտ ծագման բառապաշարը: Համեմատական քերականության բնագավառում հեղինակի երկարամյա հետազոտությունների արդյունքներն ամփոփված են «Հայերենի համեմատական քերականություն» (1982) մեծարժեք աշխատության մեջ, որտեղ ներկայացվում է հայերենի համեմատական ուսումնասիրության հարցի պատմությունը, քննարկվում լեզվական նյութի վերականգնման և նրա տեղաբաշխման հարցերը, բնութագրվում հայերենի տարածքային դիրքը, մանրամասն նշվում համեմատական հնչյունաբանության և ձևաբանության փաստերը: «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» (1987) հիմնարար աշխատության մեջ տրվում է հնդեվրոպական նախալեզվի, հնդեվրոպացիների կյանքի ու մշակույթի ընդհանուր բնութագիրը, դիտարկվում հայերենի հնդեվրոպական բաղադրիչները, ճշգրտվում հայերենի տեղը հնդեվրոպական բարբառների մեջ, ներկայացվում հնդեվրոպական միասնությունից հետո հայերենի անկախ գոյության վաղնջական պատկերը, հայերենի հնագույն շրջանի պատմությունը, V դարի լեզվավիճակի ձևավորումը, այլ լեզուների հետ հայերենի ունեցած մի շարք փոխառնչություններ և այլ հարցեր: «Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը» (1969) աշխատության մեջ տրվում է հայոց լեզվի գրավոր ժամանակաշրջանի պատմական զարգացման շարադրանքը և նրա պատմության շրջանաբաժանումը, իսկ աշխատության մյուս մասում, ինչպես նաև «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» (1974) մենագրության մեջ ուշադրություն է դարձվում արդի հայերենի նկարագրության հարցերին: Վերջինս գրված է ավանդական քերականության նվաճումների և ժամանակակից կառուցվածքային լեզվաբանության քննադատական օգտագործման հիման վրա և մեծ նշանակություն ունի ոչ միայն հայերենագիտության, այլև ընդհանուր լեզվաբանության տեսակետից: Նման նշանակություն ունի նաև «Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն» (1982) մենագրությունը, որտեղ հեղինակը նորովի է ներկայացնում իր մշակած համընդհանուր լեզվաբանական տեսությունը: Մեծ լեզվաբանին հետաքրքրել են տեսական լեզվաբանության բազմաթիվ կարևոր խնդիրներ: Նրա «Ընդհանուր և հայկական լեզվաբանություն» (1978) աշխատության մեջ նոր լուսաբանություն են ստանում լեզվի և խոսքի փոխհարաբերության, քերականական կարգերի, լեզվաբանական հետազոտության մեթոդների, լեզվաբանության կառուցվածքի և մի շարք կարևոր այլ հիմնահարցեր: Ընդհանուր բնույթի աշխատությունների մեջ հատուկ ուշադրության է արժանի «Լեզվաբանության պատմություն» (1960-1962) երկհատոր մենագրությունը, որն իր տեսակի մեջ համաշխարհային լեզվաբանության գլուխգործոցներից է: Այստեղ հեղինակը շալադրել է լեզվաբանության պատմությունը սկզբնավորման շրջանից մինչև XX դարի կեսերը, ամբողջական կերպով ներկայացրել լեզվաբանության բոլոր շրջանները, տարբեր ժամանակներում առաջացած լեզվաբանական դպրոցներն ու ուղղությունները, մեթոդները, լուսաբանել համաշխարհային լեզվաբանության պատմության մեջ հայտնի լեզվաբանների հայացքները՝ դրսևորելով իրեն ոչ միայն որպես խորոր լեզվաբան, այլև որպես մեծ փիլիսոփա:

Անցյալի գիտական ժառանգության, հայ լեզվաբանական մտքի ուսումնասիրությանն են նվիրված նաև «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» (1954), «Գ-բարարի քերականության պատմություն» (1974) մենագրությունները:

Մեծ է Գ. Ջահուկյանի ներդրումը նաև բարբառագիտության բնագավառում: Նրա ուշադրությանն են արժանացել հայ բարբառների առաջացման, տեղաբաշխման, փոխհարաբերությունների և այլ կարևոր հարցեր, իսկ «Հայ բարբառագիտության ներածություն» (1972) մենագրությունը կարելի է համարել հայ բարբառագիտության հանրագիտարանը: Այստեղ հեղինակը առաջ է քաշում դասակարգման նոր սկզբունք՝ բարբառների բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը՝ հիմք ընտրելով 100 տարբերակիչ հատկանիշ և դրանք տեղայնացնելով ըստ պատմական Հայաստանի և հայկական գաղթօջախների 120 բարբառախոս վայրերի: Աշխատության երկրորդ մասում քննվում են պատմական բարբառագիտության մի շարք կարևոր հարցեր: Աշխատության մեջ մեծ լեզվաբանը այլ բարբառների շարքում լուրջ ուշադրություն է դարձնում Ղարաբաղի բարբառին՝ շուրջ մեկ տասնյակ խոսվածքներով: Վերջինս Գ. Ջահուկյանն անդրադարձել է նաև «Արցախահայ բարբառի կազմավորման մասին» (1991) հոդվածում: Այս ամենով չեն սպառվում Գ. Ջահուկյանի գիտական աշխատանքները: Նա հեղինակ է բազմաթիվ այլ աշխատությունների և հոդվածների, որոնցից յուրաքանչյուրը լուրջ ներդրում է լեզվաբանության բնագավառում: Մեծ հայերենագետը կյանքի վերջին տարիներին կազմել և գրեթե ավարտին է հասցրել նաև հայերենի ստուգաբանական նոր բառարանը: Ինչ սկզբունքներով է այն ստեղծվել հայտնի չէ, բայց որ այն հայերենագիտության ևս մի գլուխգործոց է, պարտավոր ենք հանդիսված լինել:

Այդպիսին էր Գևորգ Բեգլարի Ջահուկյանը: Նա ուսուցչապետ էր, նորարար, լեզվաբանական դպրոցի հիմնադիր, առաջատար: Եվ քիչ է ասել մեծ, սաստանդավոր, հանճարեղ: Ամենից առաջ նա մի բարդ և անհասանելի երևույթ է, որի ժամանակակիցը լինելու փափագն ունեին նախորդ սերունդները, որի ժամանակակիցը չլինելու ափսոսանքը կունենան հաջորդ սերունդները, իսկ մենք, որ նրա ժամանակակիցն էինք, կարծես դա չէինք զգում: